ԱԼԵՔՍԵՅ ՋԻՎԵԼԵԳՈՎ

Ա. Ն. ՏԱՅԱՆ

Ալեքսեյ Կարպովիչ Ջիվելեգովը (Ալեքսանդր Կարապետի Ջիվելեգյան 1875—1952) մշակույթի ականավոր գործիչ էր։

Ջիվելեգովը միջնակարգ կրթությունն ստանում է իր ծննդավայրում՝ Նոր Նախիջևանի հայ թեմական դպրոցում, հայտնի մանկավարժ և բանասեր Երվանդ Շահազիզի տեսչության օրոք։ 1893 թ. ավարտելով թեմական դպրոցը, ընդունվում է Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը, որտեղ և աշակերտելով ռուս նշանավոր պատմաբան Պ. Գ. Վինոգրադովին, մասնագիտանում է ընդհանուր պատմության մեջ։ 1897 թ., երբ նա փայլուն կերպով ավարտում է Մոսկվայի համալսարանը, առաջարկում են նրան մնալ համալսարանում՝ պրոֆեսորական աստիճանի պատրաստվելու համար, սակայն ժամանակի լուսավորության մինիստրը մերժում է այդ առաջարկը։ Հետագայում Սովետական Միությունում Ջիվելեգովը դարձավ ոչ միայն Մոսկվայի համալսարանի, այլև բարձրագույն ուսումնական ուրիշ հաստատությունների բազմամյա և բազմերախտ դասախոս-պրոֆեսորը։

Ջիվելեգովը իր գիտական գործունեությունը սկսեց Մոսկվայի համալսարանում ուսանելու տարիներին, գրելով իր առաջին գիտական հոդվածը «Вико и его система философии» *խորագրով*[1]։

Ջիվելեգովի գիտական բուն գործունեությունը սկսվեց մեր դարի սկզբին և տևեց մինչև կյանքի ավարտը։ Կես դարի ընթացքում նա գրեց և հրապարակեց պատմական, գրականագիտական և արվեստաբանական երկու տասնյակ աշխատություններ և բազմաթիվ հոդվածներ, որոնց ընդհանուր ցանկը կազմել են Գ. Բոյաջիևը և Ս. Մոկուլսկին[2]։

Ջիվելեգովի գիտական գործունեությունը կարելի է բաժանել երկու շրջանի՝ բաժանարար սահմանագիծ ընդունելով 30-ական թվականները։ Մինչև այդ թվականները Ջիվելեգովն իր ուշադրությունը բևեռեց Արևմտյան Եվրոպայի պատմության և միջնադարյան հասարակական կյանքի ուսումնասիրության վրա, իսկ 30-ական թվականներից հետո ականավոր գիտնականն իր հետազոտության հիմնական առարկան դարձրեց եվրոպական և հատկապես իտալական վերածննդի մշակույթը։

Ջիվելեգովն իր գիտական գործունեության երկրորդ շրջանում հրատարակեց մի շարք արժեքավոր աշխատություններ։ Հատկապես կարևոր էին «Жизнь замечательных людей» *մատենաշարով հրատարակված Ջիվելեգովի մենագրությունները՝ նվիրված իտալական վերածննդի երեք մեծ դեմքերին (Դանտե, Լեոնարդո դա Վինչի, Միքելանջելո) և մի աշխատություն՝ նվիրված իտալական թատերական արվեստին։*

---

[1] «Вопросы философии и истории», М., 1896.

[2] «Сообщения института истории искусств АН СССР», 1957, № 10—11.

Ջիվելեգովը իբրև հանրաճանաչ մասնագետ իտալական վերածննդի գրականության և արվեստի՝ 1930—1940 թթ. բազմաթիվ հոդվածներ է տպագրել սովետական հանրագիտարաններում, գիտական հանդեսներում, գրական մամուլում և այլուր, ներածականներ գրել իտալական վերածննդի հեղինակների ռուսական հրատարակությունների համար։

Գիտության մեջ կարևոր ներդրում են անգլիական և ֆրանսիական վերածննդի գրականությանը նվիրված գլուխները, որ Ջիվելեգովը գրել է բազմահատոր կոլեկտիվ աշխատությունների համար, ինչպես նաև արևմտաեվրոպական թատրոնի պատմությանը նվիրված մենագրությունը[3]։

Ջիվելեգովն ունի նաև բարձրարվեստ թարգմանություններ՝ կատարված Վազարիի, Մաքիավելլիի, Լեոնարդո դա Վինչիի և Գոլդոնիի երկերից։

Նրա գիտական գործունեությունը զուգորդված է կազմակերպական և մանկավարժական աշխատանքի հետ։

Դեռ 1898 թ. երիտասարդ գիտնականը Մոսկվայում հրավիրվում է աշխատելու «Գրանատի» մեծ հանրագիտարանում, սկզբում իբրև պատասխանատու քարտուղար և ապա՝ հրատարակչության վարչության նախագահ։

1914 թ. հայ գիտնականը, երբ դեռ «Գրանատի» պատասխանատու քարտուղարն էր, Լենինին նամակով խնդրում է հանրագիտարանի համար հոդված գրել Մարքսի մասին։ Լենինը գրավոր պատասխանով ընդունում է «մեծարգո կոլլեգայի» առաջարկը, գրելով ընդարձակ հոդված, որը տպագրվում է հանրագիտարանի 1915 թ. լույս տեսած հատորում։ Այսպես ծնունդ առավ Լենինի հայտնի աշխատությունը «Կարլ Մարքս» խորագրով։

Ջիվելեգովը «Գրանատի» բազմահատոր հանրագիտարանին աշխատակցեց 40 տարի, մինչև 1939 թ.։ Այդ տարիներին հայ գիտնականը, բացի վարչական-խմբագրական աշխատանքից, հանրագիտարանի համար գրել է հարյուրավոր մեծ ու փոքր հոդվածներ։

Իր գիտա-կազմակերպական գործունեությունը Ջիվելեգովը միաժամանակ ծավալում է հատկապես «Academia» հրատարակչությունում՝ Մաքսիմ Գորկու ղեկավարությամբ և աշխատակցությամբ։

Գորկին, որի հետ Ջիվելեգովը մինչ այդ կապված էր նամակագրական կապերով, բարձր է գնահատում հայ գիտնականի ունեցած գիտելիքները իտալական դասական գրականության մասին։ Ջիվելեգովը վարում էր «Academia»-ի իտալական հրատարակությունների բաժինը։

Գորկու և Ջիվելեգովի նամակագրության և համագործակցության տարիներին (1931—1935) և այնուհետև մինչև 1939 թ.՝ ռուսերեն թարգմանություններով և Ջիվելեգովի ներածական հոդվածներով «Academia»-ի հրատարակությամբ լույս տեսան իտալական բազմաթիվ հեղինակների գործեր՝ Դանտե, Բոկաչչո, Արիոստո, Տասսո, Մաքիավելլի, Կամպանելլա, Ջելլինի, Գուիչչարդինի, Լեոնարդո դա Վինչի, Պոլիցիանո, Ֆիրենցուոլա, Մազուչչո, Կարդանո, Վիկո, Գոլդոնի, Գուերացցի, դ'Ամելիո։

---

[3] История английской литературы, т. I, М.—Л., 1943, стр. 140—148, 302—379; История французской литературы, т. I., М.—Л., 1946, стр. 249—268, 792—807; А. Дживелегов и Г. Солджнев, История западно-европейского театра. М.—Л., 1941.

Գորկու հետ նամակագրական կապերը և համագործակցված աշխատանքը «Academia»-ի հրատարակչությունում Ջիվելեգովը պատմել է իր «Горький и итальянская литература» հոդվածում[4]։

1939 թ. սկսած Ջիվելեգովը վարել է արևմտա-եվրոպական գրականության բաժինը Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտում, իսկ 1945—1949 թթ.՝ թատրոնի պատմության մասնաճյուղը Մոսկվայի արվեստի պատմության ինստիտուտում։ Անվանի գիտնականը միաժամանակ գործոն մասնակցություն է ունեցել Հայաստանի ակադեմիայի աշխատանքներին՝ 1945 թ. ընտրված լինելով ակադեմիայի թղթակից-անդամ։

Ջիվելեգովի մանկավարժական գործունեությունը նույնպես սկիզբ է առնում վաղ անցյալից։ Երիտասարդ գիտնականը դեռ հեղափոխությունից առաջ հրավիրվել է դասախոսելու Մոսկվայի և Նիժնի Նովգորոդի ժողովրդական համալսարաններում։

Սովետական իշխանության առաջին օրերից սկսած՝ պրոֆ. Ջիվելեգովը գիտա-կազմակերպական աշխատանքներին զուգընթաց դասախոսել է Մոսկվայի պետական համալսարանում, Մոսկվայի փիլիսոփայության, գրականության և պատմության, Լունաչարսկու անվան թատերական արվեստի, ինչպես նաև Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտներում։

Պրոֆ. Ջիվելեգովը 1945—1946 թթ. հրավիրվել է Երևան դասախոսություններ կարդալու պետհամալսարանում, թատերական և գրականության ինստիտուտներում։

Ջիվելեգովի հեղինակությունը ճանաչել ու գիտական գործունեությունը գնահատել են Գորկին, Լունաչարսկին, Մյասնիկյանը։

Ջիվելեգովի գիտական վաստակը կարելի է բաժանել երկու հիմնական ճյուղի՝ եվրոպական պատմություն և եվրոպական մշակույթ (մասնավորապես իտալական վերածննդի մշակույթ)։ Եթե նախասովետական շրջանում և այնուհետև սովետական շրջանի առաջին տասնամյակներում Ջիվելեգովը գլխավորապես նվիրվել է եվրոպական երկրների պատմական և հասարակական երևույթների հետազոտությանը և համեմատաբար քիչ է զբաղվել իտալական վերածննդի մշակույթով, ապա հաջորդ տասնամյակներում ականավոր գիտնականը հիմնովին նվիրվեց դեղագիտական ուսումնասիրություններ կատարելուն, պատմական իրողությունների հետազոտությունից անցավ պատմության մեջ գեղարվեստական արտահայտությունների հետազոտությանը և ամենից առաջ ու ամենից ավելի հետազոտությանը գեղագիտական արտահայտությունների այն փառահեղ շրջանի, որը մշակույթի պատմության մեջ կոչվում է իտալական վերածնունդ։ Մասնագիտությամբ պատմագետ Ջիվելեգովը դարձավ գեղագետ՝ խառնվածքով ու նախասիրությամբ։ Իզուր չէ, որ Ջիվելեգովի մերձավորները կատակով նրան անվանել են «человек ренессанса». Ականավոր գիտնականի գիտական գործունեության ամենալայն, ամենատևական, ամենաձգողական ասպարեզը իտալական մշակույթն էր՝ սկսած «իտալական գեղագիտության հայր» և նշանավոր փիլիսոփա Ջան Բատտիստա Վիկոյին նվիրված իր առաջին հոդվածից (1896) մինչև իտալացի նշանավոր արվեստագետ-դերասան Թոմազո Սալվինիին նվիրված հոդվածը, որը տպագրվեց հետմահու (1957)։

---

4 «Книжные новости», 1937, № 11

Այսպիսով՝ Ջիվելեգովի սևեռամտածության տևական առարկան եղել է իտալական մշակույթը (գրականություն, արվեստ և թատրոն), իսկ առարկայի առանցքը կազմել է իտալական վերածնունդը՝ Դանտեից մինչև XVI—XVII դդ. իտալական ժողովրդական թատրոնը։

Նույնիսկ երբ Ջիվելեգովը գրում էր եվրոպական այլ ժողովուրդների վերածննդի որևէ խոշոր հեղինակի մասին, չէր կարողանում կտրվել իտալական միջավայրից. դրա վկայությունն է «Шекспир и Италия» խորագրով իր ծավալուն և արժեքավոր աշխատասիրությունը՝ տպագրված է Մաքսիմ Գորկու հիմնած հանդեսում[5]։ Իզուր չէ, որ Ջիվելեգովը հռչակվեց որպես իտալական վերածննդի մշակույթի ամենահեղինակավոր մասնագետը և պատահական չէ, որ ականավոր գիտնականի աշխատությունները՝ նվիրված Դանտեին, Միքելանջելոյին, Լեոնարդո դա Վինչիին և այլոց այսօր էլ պահել են իրենց գիտական արժեքը և, բնականաբար, վերահրատարակվում են։ Բայց արդյո՞ք մեծանուն գիտնականը զինվորագրվելով գեղագիտությանը, լքե՞ց պատմությունը։ Ամենևին ոչ։ Ճիշտ է, Ջիվելեգովը զուտ պատմությունը այլևս չդարձրեց հետազոտության առարկա, բայց պատմությունը դարձրեց գեղագիտության լծակիցը։ Այստեղից էլ՝ գիտնականի գեղագիտական ուսումնասիրությունների հագեցածությունը պատմականությամբ։

Բայց Ջիվելեգովի գործունեության նկարագիրը թերի կլիներ, եթե չնշվեն նաև այն թելերը, որոնք ականավոր գիտնականին կապում էին հայ ժողովրդի պատմության և մշակույթի հետ։ Դրանք հյուսված էին վաղուց, երբ Ջիվելեգովը դեռ պատանի հասակում հայրենաշունչ ուսուցիչների ձեռքի տակ հայացի դաստիարակություն էր ստանում Նոր Նախիջևանի թեմական դպրոցում։ Այդ թելերը հետագայում այնքան ամրացան, որ չէին կարող աննշմարելի մնալ ականավոր գիտնականի ընդարձակ գործունեության մեջ։

Ջիվելեգովը ընդամենը 25 տարեկան էր և դեռ նոր էր մուտք գործել գիտության կաճառ, երբ պատմաբանի իր առաջին պարտականություններից մեկը համարեց զբաղվել իր ժողովրդի պատմական ճակատագրով։ Այնուհետև այդ թեման միշտ մնաց ականավոր գիտնականի ենթագիտակցության մեջ, և երբ որ Հայկական հարցը հայկական կոտորածների առնչությամբ հուզում առաջացրեց ռուս հասարակական առաջավոր խավերի մեջ, հայրենասեր գիտնականը առաջիններից մեկն էր, որ ձայնը բարձրացրեց հօգուտ իր ժողովրդի դատի արդարացի լուծման։ Եվ երիտասարդ գիտնականը այդ ուղղությամբ իր առաջին ելույթը կատարեց 1900 թ. նոյեմբերի 26-ին՝ Պետերբուրգի հասարակության առաջ հրապարակային դասախոսություն կարդալով ռուս-հայ հասարակական գործիչ Գ. Ա. Ջանշիևի հիշատակին նվիրված երեկոյում[6]։ Ջիվելեգովի այդ դասախոսությունը Հայկական հարցի ամփոփ պատմությունն էր 1895—1896 թթ. հայկական կոտորածների առնչությամբ, որոնք այնքան հուզել էին ռուս հասարակական միտքը և որոնց առիթով այնքան հայանպաստ գործունեություն էր ծավալել Գ. Ջանշիևը՝ ռուս հասարակական առաջավոր խավերի մեջ։

Ջիվելեգովը հայրենասիրական եռանդուն գործունեություն ծավալեց նաև համաշխարհային առաջին պատերազմի տարիներին, իր բազմաթիվ հոդված-

---

5 Տե՛ս «Литературная учеба», М., 1938, № 12.

6 Г. А. Джаншиев и армянский вопрос (տե՛ս «Русская мысль», М., 1901, кн. 2)

ներով ռուս հասարակական միտքը հրավիրելով հայկական արհավիրքների վրա։ Նա հայ ժողովրդի փրկությունը կապում էր Ռուսաստանի հետ։

1939 թ. Ջիվելեգովը իբրև պատվավոր հյուր Մոսկվայից հրավիրվել էր Երևան, մասնակցելու Սասունցի Դավթի հազարամյակի տոնակատարությանը։

Հետպատերազմյան տարիներին նա կենտրոնական մամուլում արժեքավոր հոդվածներ է տպագրել Արովյանի, Թումանյանի և Իսահակյանի մասին, առաջարաններ գրել Գ. Դոյանի՝ հայ թատրոնի 2000-ամյակին նվիրված աշխատության և Դանտեի հայերեն թարգմանության հրատարակությունների համար։ Ջիվելեգովի հետպատերազմյան այցելությունները Սովետական Հայաստան առավել ևս ամրապնդեցին ականավոր գիտնականի հոգեկան կապերն իր ժողովրդի հետ։ Հայաստան կատարած իր այցելությունների ժամանակ նա խանդավառվել է իր ժողովրդի պատմական հուշարձաններով, ներկա նվաճումներով և ցանկություն է հայտնել կյանքի վերջին տարիներն ապրել իր ժողովրդի ծոցում[7]։

Վերահաս մահը բաղում ուրիշ մտահղացումների հետ խափանեց մեծանուն գիտնականի նաև այդ ծրագիրը։

Ջիվելեգովը հայ ժողովրդի արժանավոր զավակն է։ Նրա մտքի փայլը տասնամյակներ շարունակ շողացել է միութենական տարածքի վրա։ Մեծ գիտնականի ընտիր երկերի հրատարակությունը կլիներ մեր ժողովրդի հարգանքի տուրքը մեծանուն գիտնականի անմոռաց հիշատակին։

АЛЕКСЕЙ ДЖИВЕЛЕГОВ

А. Н. ТАЯН

Резюме

Алексей Карпович Дживелегов был одним из выдающихся деятелей советской литературы.

Дживелегов выступил с историографическими трудами еще до Октября. После революции он приобрел большую известность своими монографиями, посвященными итальянскому Возрождению. Научная деятельность Дживелегова получила высокую оценку М. Горького, А. В. Луначарского, А. Ф. Мясникяна.

Научную деятельность Дживелегов сочетал с педагогической, будучи на протяжении долгих лет лектором ряда вузов Москвы. Он читал лекции и в вузах Еревана. Дживелегов был член-корреспондентом АН Арм. ССР, принимал активное участие в научной жизни нашей республики.

ՋԻՎԵԼԵԳՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Городская община в средние века, СПб., 1901.
Средневековые города в западной Европе, СПб., 1902, 1903.
Торговля на Западе в средние века, СПб., 1904.
Армяне в России, М., 1906.
Начало итальянского Возрожения, М., 1908, 1924.

---

7 Տե՛ս Հ. Ղանալանյան, Մտերիմ դեմքեր, Երևան, 1963, էջ 58—66։

История современной Германии, ч. I, СПб., 1908; ч. II, СПб., 1910.

Александр I и Наполеон. М., 1915.

Вольные города в Европе, М., 1919.

Крестьянские движения на Западе. Исторический очерк. М., 1920, 1922, 1923.

Армия Великой французской революции и ее вожди. Исторический очерк, М.—Пг., 1923.

Очерки итальянского Возрождения. Кастильоне—Аретино—Целлини, М., 1929.

Данте Алигьери. М., 1933, 1946.

Леонардо да Винчи, М., 1935, 1969.

Микельанджело, М., 1938, 1957.

История западноевропейского театра от возникновения до 1789 г. (в соавторстве с Г. Н. Бояджиевым), М.—Л., 1941.

Итальянская народная комедия М., 1954, 1962.